Իրիկնաղէմին կատարուեցաւ կարգ «Ննջեցելոց» և «Հանգստեան», Նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեանի։

Գիշերը ժառանգաւորաց վարժարանի դաշտին վրայ կը վառէր աւանդական կրակը։

● Ուրբ. 27 Փետր. — **Տեառնընդառաջ**: Հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ մատոյց և քարոզեց՝ Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեան, եպիսկոպոսական խոյր ի գլուխ։

«Տէր ողորմեա»յէն առաջ Գեր. Տեղապահ Սրբազան Հայրը ըրաւ հետեւեալ ծանուցումը. —

Սիրելի ժողովուրդ Հայոց,

Ս. Աթոռոյս, Հարաւային Ամերիկայի պատուիրակ Նուիրակ, Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեան, այսօրուան սուրբ և անմահ պատարագին մէջ խնդրամատոյց կ՚ըլլայ ողբերգի աղօթենք բոլոր այն ազնիւ և մեծանձն ազգայիններու հոգիին՝ որոնց զաւակները իրենց լումաներովը աշխատեցան որ այս ազգապարծան և սուրբ Տան կանթեղներուն ձէթը չպակսի, Ձորպէսզի այս Հաստատութեան հովանիին ներքև ապաստանած հայրենակիցներու կարօտեալ և կարկառուն ձեռքերը պարապ չմնան։ . . .

Սիրելի եղբայրներ և քոյրեր,

Եթէ տալը հաճոյք է, առնելն ալ երախտագիտութիւն։ Տուողն ու առնողը կը հոգեխառնուին այս քաղցրութեան մէջ. Թող Տէրը ընդունի անոնց լումաները, ինչպէս ընդունեց այրի կնոջ երկու լուման և մոգերու կնդրուկն ու զմուռսը. Թող Տէրը լոյսերու մէջ հանգչեցնէ բոլոր անոնց հոգիները որոնց որդիները կը շարունակեն իրենց պապերուն ազնիւ առաքինութիւնները։

● Շբ. 28 Փետր. — **Ս. Կիւրղի Երուսաղիմացւոյն**: Առաւօտեան ժամերգութեան Ս. Ստեփանոսի մատրան հանդիսութեան կը նախագահէր Հոգ. Տ. Գարեգին Վրդ. Վրթանէսեան։ Ժամերգութենէն ետք, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Ստեփանոս մատրան Ս. Կիւրղի սեղանին վրայ։ Ժամարարն էր Հոգ. Տ. Օշական Աբղ. Մինասեան։

---

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● Եշ. 12 Փետր. — Կէսօրէ վերջ ժամը 3ին, Տեղապահ Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Գեր. Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեանի, վարչական գործերով Իսրայէլ մեկնեցաւ։

Գեր. Սրբազանները վերադարձան Երկուշաբթի 16 Փետրուար, յետմիջօրէի ժամը 3.30ին։

● Դշ. 25 Փետր. — Յետ միջօրէի ժամը 3ին, Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեան, Ս. Աթոռոյս Միաբաններէն և Հարաւամերիկեան Նուիրակ Երուսաղէմի, ժամանեց Ս. Աթոռ։ Հոգ. Հայրսուրբը իբրև Ս. Աթոռոյ Նուիրակ մեկնած էր Հարաւային Ամերիկա։

Ս. Աթոռ իր ժամանելէն ետք, նախ այցելեց Ս. Գլխադրի մատուռը, իր ուխտը ընելէ ետք, Հոգեշնորհ Հայրերու ընկերակցութեամբ բարձրացաւ պատրիարքարանի դահլիճը ուր տեղի ունեցաւ ջերմ ընդունելութիւն մը։ Խօսք առին Գեր. Տեղապահ Սրբազանն ու Նուիրակ Հոգեշնորհ Հայրսուրբը։

---

ՄԻԱԲԱՆ
ՄԻՀՐԱՆ ՋՈՒԼՖԱՅԵԱՆ

Ցաւով կ՚արձանագրենք մահը Ս. Աթոռոյս աշխատաւոր միաբաններէն Միհրան Ջուլֆայեանի, որ տեղի ունեցաւ 19 Փետրուար 1953 կէսօրէ առաջ ժամը 10ին։

Հանգուցեալը ծնած էր Ատանա, 1872ին, Ս. Աթոռոյս Միաբանական Ուխտին անդամակցած էր 1936ին։

Թաղման արարողութիւնը կատարուեցաւ 20 Փետր. 1953ին, և մարմինը ամփոփուեցաւ Զամթաղի կից գերեզմանատան մէջ։

Տասներէն յարգուած և շատերուն ծառայած այս բարի ծերունին իր ետև կը ձգէ եկեղեցասէր և ազգասէր Միաբանի մը յիշատակը։

Հանգիստ իր հոգիին։

---

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Zaven Chinchinián. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

digitised by A.R.A.R.@